ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ԳՆՀԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով թղթային եղանակով ԳՀ գնման ընթացակարգով «Գալյա Նովենց» ՀԿ կարիքների համար հյուրանոցային ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.10.2019թ. ժամը 09:00-ին, ք.Երևան, Ամիրյան 26 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Մկրտչյանը, անդամներ՝ Ս.Մանուկյանը, Կ.Մաճկալյանը և քարտուղար՝ Հ.Բարղությանը:

Օրակարգ

ԳՆՀԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ԳՆՀԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը		Նախահաշվային գինը
	Շիրակ ՍՊԸ		
	Գնային առաջարկը, ՀՀ դրամ		
	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ	
1	1 295 833	1 555 000	1 550 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել: Հայտով առաջարկված գինը գերազանցում է նախահաշվային գինը, և քանի որ մասնակիցը ներկա էր նիստին, առաջարկվեց բանակցել գնային առաջարկի շուրջը, ինչի արդյունքում առաջարկվող գինը սահմանվեց 1 550 000՝ մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար:

Հանձնաժողովը որոշեց՝

- ԳՆՀԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել Շիրակ ՍՊԸ-ին
- Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

-Հանձնաժողովի հաջորդ նիստը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 09:00-ին, ք.Երևան, Ամիրյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Ս.Մկրտչյան

անդամներ _____ Ս.Մանուկյան

_____ Կ.Մաճկալյան

քարտուղար _____ Հ.Բարղության